ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պետության տնտեսական քաղաքականության մշակման, իրականացման և հետևանքների համարժեք գնահատման համար շատ կարևոր է համապատասխան մասնագիտական գիտելիքներով, հմտություններով և կարողություններով մասնագետների առկայությունը:



Ծրագրի տևողությունը
1.5 տարի

Դասապրոցեսը
շաբաթական 3 անգամ
18:00-ից հետո

Ուսման վճարը (տարեկան)
700.000 ՀՀ դրամ

Որակավորում
տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

1.Զարգացման տնտեսագիտություն
2.Տնտեսական սիներգետիկա
3.Ինֆորմացիոն տնտեսագիտություն
4.Նորարարական քաղաքականություն
5.Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտություն
6.Տնտեսագիտություն տեսության արդի հիմնախնդիրներ
7.Գիտական հետազոտության մեթոդաբանություն
8.Մասնագիտական օտար լեզու

երկրորդ կիսամյակ

1.Մարդկային կապիտալի տեսության արդի հիմնախնդիրները
2.Նեյրոտնտեսագիտություն
3.Սոցիալական ոլորտի տնտեսագիտություն
4.Տնտեսական աճի ժամանակակից տեսություններ
5.Ժամանակային շարքերի վերլուծություն
6.Տնտեսական գործընթացների համակարգային մոդելավորում

Գիտամանկավարժական փորձառություն
(տևողություն՝ 6 շաբաթ)

երրորդ կիսամյակ

Գիտահետազոտական փորձառություն
(տևողություն՝ 10 շաբաթ)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ֆիրուզա Նորայրի Մայիլյան

տ.գ.դ., դոցենտ, «Տնտեսագիտության տեսություն» ամբիոնի վարիչ, մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար, դասավանդում է նաև Մոսկվայի պետական համալսարանում

Տաթևիկ Արտաշեսի Մկրտչյան

տ.գ.թ, ավագ դասախոս, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, դասավանդման փորձ Հունգարիայի Միշկոլցի Համալսարանում

Ատոմ Շավարշի Մարգարյան

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորա-տորիայի ղեկավար, դասավանդման փորձ Գերմանիայի Դաշնային հանրապետության Աուգզբուրգի համալսարանում

Վարդան Սամվելի Վլասյան

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել տնտեսության պետական և մասնավոր հատվածներում, միջազգային կազմակերպություններում, հետազոտական, վերլուծական կենտրոններում և իրականացնել փորձագիտական, հետազոտական, վերլուծական բնույթի աշխատանքներ: Մասնավորապես՝ տնտեսական քաղաքականության մշակման, գնահատման և վերլուծության համար պատասխանատու ստորաբաժանումներում կարող են զբաղեցնել տարբեր պետական պաշտոններ: Տեղական և միջազգային կազմակերպություններում զբաղեցնել տարբեր պաշտոններ կապված՝ տնտեսական ծրագրերի, զարգացման ռազմավարությունների մշակման և իրականացման հետ:

շրջանավարտներ

1. Հայկանուշ Հարությունյան-IDբանկ անհատական ծառայությունների բաժնի ղեկավար
2. Աշխեն Միքայելյան- «Դեկորպրոֆ» ՍՊԸ, Ներմուծման բաժնի պատասխանատու
3. Սամվել Մարգարյան - ՀՀ Ֆինանսների նախարարության «Մակրոտնտեսական քաղաքականության վարչության» իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի ավագ մասնագետ
4. Արթուր Այրումյան - ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի Եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ
5. Անի Քեռյան- դասախոսում է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում
6. Լիլիթ Մելքոնյան -«Ֆաստ Կրեդիտ» ՈՒՎԿ գանձապահ
7. Զոհրաբ Դալլաքյան - «Ինեկոբանկ» ՓԲԸ ՓՄՁ բաժնի բիզնես խորհրդատու
8. Արաքսյա Ստեփանյան - «Ամերիաբանկ» Հաճախորդների սպասարկման մենեջեր
9. Արսեն Ըռքոյան - ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Ծրագրի շրջանավարտները աշխատում են տնտեսության տարբեր ոլորտներում և ունեն մասնագիտական մեծ հաջողություններ

Բարև Ձեզ, ես Ղարագեդյան Սեդան եմ, աշխատում եմ «Ինոմմա վեբ» ծրագրավորման ընկերությունում որպես պրոդուկտի գծով տնօրեն:

ՀՊՏՀ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ մագիստրատուրայում ուսանելու տարիներին հիմնավոր գիտելիքներ և մասնագիտություն ձեռք բերելուց բացի ստացել եմ անգնահատելի փորձառություններ, ընկերներ ու ծանոթություններ՝ ամբողջ կյանքի համար:

Լիանա Իսայան, ՀՊՏՀ ասպիրանտ, ավագ վերլուծաբան Ամերիաբանկ ՓԲԸ-ում, սկսած 2016 **թ.-ից համագործակցում է ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի հետ**:



Սիրելի դիմորդներ, տնտեսագիտության տեսություն մասնագիտացումն ընտրելը հնարավորություն է տալիս դասավանդվող առանձին առարկաների շրջանակում խորապես ուսումնասիրել, օրինակ, վարքագծային տնտեսագիտություն, զարգացման տնտեսագիտություն, նեյրոտնտեսագիտություն, ինստիտուցիոնալ տնտեսագիտություն, ինովացիոն տնտեսագիտություն, ցանցային և ինֆորմացիոն տնտեսագիտություն, մարդկային և սոցիալական կապիտալի տեսություն, և այլն, և այլն, և այլն:
Հետո չասեք, թե Հայաստանում որտե՞ղ նման բաներ սովորենք, որ բարձր պահանջարկ վայելող տնտեսագետ դառնանք :

Նարե Հարությունյան-ԱԿԲԱ բանկ, վարչության պետ

Ցանկացած գիտելիքի մեջ դրա հիմնարար սկզբունքների իմացությունը յուրաքանչյուր տեսակի կրթության կամ գիտության ողնաշարն է, իսկ այդ գիտելիքի նկատմամբ հետաքրքրության ստեղծումն ու կիրառման հնարավորությունների համադրումը՝ կազմակերպչական ու մեթոդական մանրակրկիտ աշխատանքի արդյունք: ՀՊՏՀ-ն ինձ տվել է այն ազատությունը, որով ես կարողացել եմ ստացած տեսական գիտելիքները կիրառեմ առօրյայում, համադրեմ գործնականում նույնատիպ գիտելիքի այլընտրանքի հետ՝ ինձ համար որպես ուսանող բացահայտելով նոր հնարավորություններ:

Ես՝Լուսինե Գրիգորի Գրիգորյանն եմ, գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ-ի մագիստրատուրան՝ <<Տնտեսագիտության տեսություն>> մասնագիտությամբ:

Ուսումնական ընթացքը ՀՊՏՀ-ում անցել է շա՛տ հետաքրքիր և անմիջական միջավայրում: Լինելով այլ համալսարանի շրջանավարտ, այստեղ հանդիպել եմ ջերմ ընդունելության և բարեհամբույր վերաբերմունքի դասախոսների կողմից, ովքեր ուսման տարիների ընթացքում ոգեշնչել և օգնել են հաղթահարել ցանկացած դժվարություն: Դասերի ընթացքում հետաքրքիր քննարկումներ և բանավեճեր եմ ունեցել դասախոսների և համակուրսեցիների հետ՝տնտեսության զարգացման ուղղությունների, աշխատաշուկայի, մարդկային կապիտալի դերի և պետության վերաբերյալ: Ժամային գրաֆիկի շնորհիվ, ուսումը ՀՊՏՀ-ում կարողացել եմ համատեղել աշխատանքի հետ:

Առանձնակի ձեռքբերում եմ համարում սեփական ընկերության բացումը մագիստրատուրայի առաջին կուրսում: Շնորհիվ ՀՊՏՀ-ի ձեռք եմ բերել նոր ընկերներ և նրանց հետ ունեցել ու ունենալու եմ շա՛տ երջանիկ պահեր: Շնորհակալ եմ ՀՊՏՀ-ին ջերմ վերաբերմունքի, առողջ կրթական միջավայրի համար: Առանձնակի շնորհակալ եմ Տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոսական անձնակազմին՝նոր գիտելիքների, անմիջական մոտեցման և մոտիվացիայի համար:

ՀՊՏՀ-ում անցկացրած տարիները իմ կյանքի ամենագունեղ շրջանից են: